



**ՉԱՐԵՆՑԱՎԱՆ, ԾԱՂԿԱԶՈՐ, ԳԱՎԱՌ, ԱՇՏԱՐԱԿ  
ՔԱՂԱՔՆԵՐԻ և ԱՊԱՐԱՆ ՔԱՂԱՔԻ ՈՒ  
ՏԱՐԱԾԱՇՐՁԱՆԻ ՄՊԱՍԱՐԿՎՈՂ  
ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ և  
ՋՐԱՀԵՌԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ**

**Երկիր** Հայաստանի Հանրապետություն  
**Պատվիրատու** Համաշխարհային Բանկ  
 “Հայջրմուղկոյուղի” ՓԲԸ  
**Ժամկետ** Հունիս 2006 – Հունվար 2007

***Ծրագրի և  
կատարված  
ծառայության  
համառոտ  
նկարագիր***

Նշված հինգ քաղաքների համար կատարվել են հետևյալ հիմնական աշխատանքները.

- դաշտային գործիքային ուսումնասիրություններ,
- գոյություն ունեցող խողովակաշարերի (մայր ջրատարների և ջրամատակարարման ցանցի) բացահայտում և քաղաքների ջրամատակարարման սխեմաների վերհանում, քարտեզագրում,
- ջրապահանջարկի հաշվարկ,
- հիդրավիկ մոդելավորում,
- ջրամատակարարման ցանցի գոտիավորման հիմնավորում,
- բարելավմանն ուղղված միջոցառումների դասակարգում, միջոցառումների առաջնահերթության գնահատում,
- մանրամասն նախագծային փաթեթների մշակում, ներառյալ աշխատանքային գծագրերը, տեխնիկական մասնագրերը, ծավալների ամփոփագրերը, գնումների փաթեթը, նախահաշիվները, և այլն:



Բացի վերոնշյալ գործունեություններից, մշակվել են նաև Մաքրավանի (Ծաղկաձոր), Ալափարսի և Քաղաքային ((Չարենցավան), Եզնակի (Ապարան) և Հացառատի (Գավառ) պոմպակայանների վերակառուցման, ինչպես նաև Ծաղկաձոր, Աշտարակ, Ապարան և Գավառ քաղաքների քլորակայանների նախագծերը:



***Ծրագրի նպատակը***  
 Բարելավել Չարենցավան, Ծաղկաձոր, Գավառ, Աշտարակ քաղաքների և Ապարան քաղաքի ու տարածաշրջանի սպասարկվող բնակավայրերի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերը: